ՓՐՆՍԻՒԿՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՊԱՍՏ

ՍԷՆ-ՄԱՐՏԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԳՐՈՒԱԾ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՓՕՆ-ՀՈՒՄԲՈԼԴԻ ՀԱՄԱՐ

արուս սկզբի հայերենագէտներից ա-
ւելնանշանաւորն է Ժան Անտուան Սէն-
Մարտէնը, որի բազմաթիւ երկերը
հայոց և վրաց պատմութեան և գրա-
կանութեան վերաբերեալ մինչև այժմ
իսկ եւրոպական գիտնականների հա-
մար միակ աղբիւրներն են։ Հայերս,
բայց մանաւանդ վրացիք, այս գիտ-
նականին ենք պարտական այն հետա-
քրքրութեան և ուսումնասիրութեան
ոգին, որ ունին եւրոպացիք մեր
պատմութեան և գրականութեան մասին, ուստի և շնոր-
հապարտ ենք արդոյ պ. Կ. Եղեանին, որ իւր վեր-
ջին շարադրութեան մէջ [1]) զետեղել է այն ծրագիրը, որ

---

[1]) Г. А. Эзовъ. Сношеніе Петра великаго съ Армянъ-народомъ. 1898 С. П. Б. եր. 474—499. Հմմտ. Ներած. եր. CXL:

Սէն-Մարտէնը աշխարհահռչակ Ալէքսանդր Փոն Հումբոլդի միջոցով առաջարկել էր ռուսաց կառավարութեան։ Այս հետաքրքրական յիշատակարանն հանուած է Փարիզու ազգային մատենադարանի ձեռագրական բաժնից և հրատարակուած է առաջին անգամ. աչքի առաջ ունենալով Սէն-Մարտէնի վաստակները հայագիտութեան վերաբերեալ, որոնց մասին ցանկացողը կարող է դիմել Ջրումպֆի հայագէտներին նուիրուած գրքին, որ «Քազմավէպ» ընդարձակելով հրատարակեց։

Երբ Արարատեան աշխարհը թօթափեց մահմէտական լուծն և ընկաւ ռուսաց ձեռքը, արևմտեան գիտնականների մէջ յոյս ծագեցաւ, որ այժմ Հայաստանի նման հին պատմական աշխարհը մերձենալի կը լինի գիտութեան և գիտնականներին. այդ յոյսն ունեցաւ նաև Սէն-Մարտէնը, որ Ցուլիսեան յեղափոխութեան չնորհիւ զրկուած էր Փարիզում իւր բոլոր պաշտօններից և փնտռում էր մի ապաստէղ, ուր կարող լինէր գործ դնել իւր ընդարձակ և բնմնաւոր գիտութիւնը։ Իւր ժամանակի գիտնական աստղերից ամենից փայլունն էր Ալէքսանդր Փոն Հումբոլդը, որ վայելում էր ռուսաց կայսեր բարեկամութեան նորն, ուստի և Սէն-Մարտէնը նրան ուղարկեց Հայաստանի ուսումնասիրութեան համար իւր կազմած ծրագիրը։ Հումբոլդը 1832 թուի փետրուարի 28 ին մի նամակով ուղարկում է Սէն-Մարտէնի յիշատակարանը ռուսաց նախարարապետ կոմս Նէսլրոդէին իւր կողմից այսպէս յանձնարարելով.

«Ես ինձ պարտք համարեցի, տէր կոմս, Ձեզ մատուցանելու Հայաստանի ուսումնասիրութեան մի ծրագրի պատճէն, որ պ. Սէն-Մարտէնը, ամենանշանաւոր արևելագէտներից մէկը, որ յատկապէս նուիրուած է մարդկային քաղաքակրթութեան այդ հնագոյն հայրենիքի ուսումնասիրութեան, պարտաւորացրել էր հաղորդելու պ. Լիւեն իշխանին, լաւ կըլինէր, կայսերական չքնաղ փառօք Հայաստանի մեծագոյն մասն քրիստոնէական աշխարհին վերադարձնելուց յետոյ, ի լոյս ածել այդ երկրի պատմական յիշատակարանները և մի յատուկ աշխատասիրութեան մէջ առնդել յետագային այժմեան թագաւորու-

թեան մեծ ձեռնարկութիւնների յիշատակը»։

Այս միջնորդութիւնը անմիջական հետեւանք չունեցաւ, որովհետեւ կոմս Նէսլրոդէն պատասխանեց Ա. Փոն Հումբոլդին, որ ինքը մեծ հետաքրքրութեամբ կարդայ Մէն Մարաէնի յիշատակարանը, բայց ափսոսում է, որ այժմ յիշեալ նահանգների պատերազմներից յետոյ այնպիսի անկազմ վիճակի մէջ են, որ այնտեղ գիտնական ուղեւորութիւնների անհնարին են։

Ափսո՜ս որ Մէն-Մարաէնի կազմած ծրագիրը չիրագործուեցաւ և մինչև այսօր իսկ pium desiderium է։ Ահա այդ ծրագրի թարգմանութիւնը։

Ցէր բարօն

Դուք յաճախ լսօսակցել էք ինձ հետ այն վաս հետաքրքրութեան մասին, որ Ն. Մ. Ռուսիոյ կայսրը տածում է առ ամենայն, ինչ որ վերաբերում է Հայաստանի ու հայկական պատմութեան, ինչպէս նաև Ս. Պետերբուրգում և Մոսկուայում մի հարուստ մատենադարան հիմնելու ծրագրի և այն ջանքերի մասին, որ մտադիր է գործ դնելու այդ նպատակին հասնելու համար։ Քանիցս Դուք ինձ արտայայտել էք, թէ ցանկալի կը լինէր, որ ես կարողանայի ինձ նուիրել կայսեր աղնիւ և վեհանձն դիտումների իրագործման, որոնք առիթ կը լինին մեծամեծ յայտնագործութիւնների և նշանաւոր հետազօտութիւնների ի փառս իւր կայսերութեան, *որովհետեւ Հայաստանի եւ հետաքրքրական հայ ազգի վրայ պիտի յենուի այն ազդեցութիւնը, որ Ռուսիան կոչուած է գործ դնելու Ասիոյ ապագայ ճակատագրի վրայ։*

Ես անշուշտ շատ երջանիկ կը համարէի անձս, եթէ Ն. Մ. Կայսեր հայեացքը դէպի ինձ դառնար. ես շատ յարգուած կը լինէի, եթէ կարողանայի այն գործին լինել, որ նա կընտրէր իւր ցանկութիւնների իրագործման համար։ Եթէ այդպէս լինէր, ես աշխոյժ փութով կընուիրէի կեանքիս մի մասն այդ գեղեցիկ ձեռնարկութեան։

Ես եմ, կամ կարծում եմ թէ եմ, միակ ըստ չափու պատրաստուած անձն, միակ անձն, որ զբաղուել եմ Հա-

յատկանով ամենից աւելի յարատեւութեամբ ու ընդարձակ ծաւալով։ Այս երկրիս վերաբերեալ ուսումնասիրութիւններն, ինչպէս դիտէք, ինձ համար միշտ նախամեծար են եղել։ Տասն և չորս տարի է արդէն, որ հրատարակել եմ իմ յիշատակարաններս Հայաստանի պատմութեան և աշխարհագրութեան վերաբերեալ (Memoires historiques et géographiques sur l'Armenie)։ Սա առաջինն և ցարդ միակ երկն է, որ բովանդակում է բազմաթիւ, ճիշդ և ընդարձակ ծանօթութիւններ այս երկրի մասին։ Այդ ժամանակից սկսած ես չեմ դադարել նոյն առարկայով զբաղուելու։ Միայն ցանկութիւնս, որ իմ նոր վաստակներս կատարելութեան այն աստիճանին, որին նրանք ընդունակ են, հասնեն և նրանց ըստ կարելւոյն ամբողջացումն, արդելել են ինձ ցարդ նրանց հրատարակումը։

Ես բազել, բննել և դասաւորել եմ ամենը ինչ որ կարելի էր այստեղ ժողովել այն ազգերի և տէրութիւնների պատմութեան և աշխարհագրութեան մասին, որոնք յաջորդել են միմեանց Ասիոյ տիրապետութեան մէջ ամենահնադոյն ժամանակներից սկսած, Հայաստանն ընդունելով երբն կենդրոն և յենակէտ իմ հետազօտութիւնների։ Իմ աշխատասիրութեանս բաժանումներն ու ստորաբաժանումներն արուած են արդէն, նիւթերը մշակուած և շարակարգուած, գլխաւոր յատկագիծը գծուած. և ես կարող եմ այդ հաղորդել տպագրած։ Սակայն, չնայելով իմ ջանքերիս, զգում եմ որ դեռ շատ թերութիւններ կան աշխատութեանս մէջ, որովհետև հայկական գրականութեան յիշատակարանների թիւը շատ սակաւ է Փարիզում։ Այդ թերութիւնները լրացնելու համար կարևոր կը լինի մի գիտնական և գրականական ուղևորութիւն ձեռնարկել դէպի Մեծ Հայք և դէպի ռուսական կայսրութեան բազմաթիւ նահանգներն, ուր բնակւում են հայերը։ Քսանից աւելի հայ պատմագիրներ կան, որոնց ես անբաւարար բազուածներից միայն եմ ծանօթ։ Ես այդ երկերը կը գտնէի Ռուսիայում, ինչպէս նաև մեծ քանակութեամբ այլ հետաքրքրական երկեր։ Հայկական մատենադարանի կազմակերպութիւնը, որ ցանկանում է Ն. Կայսերական մեծութիւնը, կարող է լինել

մի այսպիսի ճանապարհորդութեան հետևանքը։

Այս դեռ ամենը չէ. հայերն ամենայն ժամանակներում վաւերագրել են քարերի վերայ հասարակական վճիռներ (actes publics) և մեծ դէպքերի յիշատակութիւններ [1]։ Նրանց պատմութիւնն, այսպէս ասած, արձանագրուած է քարերի և իրենց երկրի ժայռերի վրայ [2]։ Նրանց արքայական հին պալատները, բերդերը, կամուրջները, եկեղեցական և քաղաքական շինութիւնների պարիսպները ծածկուած են, ես այդ գիտեմ, արձանագրութիւններով, որոց պատճէնները մեծ նշանակութիւն կունենային։ Ես դրանցից մի քանին ունիմ, որ ծագում են Մեծ Հայքից, և բաւական են ինձ գաղափար տալու այդպիսի ժողովածուների օգտակարութեան մասին։

Գրականական յիշատակարանները Պետերբուրգում, Մոսկուայում, Ամստրդամում և այլուր թէ գրատանց, թէ տէրութեան դիւաններում և թէ հայերի ձեռքում խնամքով որոնելուց յետոյ անհրաժեշտ կը լինի Կովկասեան լեռներն անցնել և նոյն խուզարկութիւնը շարունակել Վրաստանում և Մեծ Հայքում։ Պէտք կը լինի նաև բաւական երկար ժամանակ մնալ այն կողմերում երկիրը հետախուզելու և հին շէնքերը, քաղաքներն ու անհամար վանքերը այցելելու, պեղումներ անելով քանի մի տեղերում։ Պէտք է կարծել, որ այս պեղումները բեղմնաւոր կը լինին, մանաւանդ Երմաւրում և Արտաշատում և այն

---

[1]) Սէն-Մարտէնը շինութեանց արձանագրութիւններին շատ աւելի նշանակութիւն է վերագրում, քան նրանք ունին։ Հայերը յունաց նման ոչ հասարակական վճիռներ են ունեցել և ոչ էլ կարող էին այդպիսի վճիռներ փորագրել քարերի վրայ։ Հայկական արձանագրութիւններն ինչպէս այժմ կարող ենք դատել բազմաթիւ օրինակներից, վկաներ են անցած ժամանակների և կրում են միայն բարեպաշտ հիմնարկողների անուններ ու նրանց ժամանակը։

[2]) Այս ճշմարիտ է նախահայկական ժամանակի համար, որի պատմութիւնը պահպանել են բևեռագիր արձանագրութիւնները։ Ե. Թ.

հին արքայանիստ քաղաքներում, որ ընկած են Ընաքսի ափերին, Էջմիածնի և Մասիսի շրջականերում։

Այս հետախուզութիւններն ամբողջացնելու համար կարևոր կը լինի նոյնպէս քանի մի շրջագայութիւններ (excursion) անել դէպի տաճկական Հայաստան, դէպի Վան, Ղարս և Էրզրում, մնալ մի քանի ամիս Կ. Պօլսում, մի այցելութիւն անել Տրասիլվանիայ, Հունգարիայ, Ցրիէստի և Վիննատկի հայերին, և վերջացնել այս ուղևորութիւնն Հռոմում, ուր քահանայապետական դիւաններն ու մատենադարանները բազմաթիւ հայոց վերաբերեալ վաւերաթղթեր են պարունակում։

Պատմական և գրական գանձերից զատ, որ կը լինի այսպիսի ձեռնարկութեան յայտնի արդիւնքները, Ն. Կ. Մեծութիւնը ձեռք կը բերէ մի ստոյգ տեղեկութիւն այն գեղեցիկ և երևելի երկրների, որ իւր յաղթական զէնքերն աւելացրել են այն բազմաթիւ նահանգների վրայ, որոնք արդէն իւր ժառանգութիւնն էին կազմում։

Մի այնպիսի ձեռնարկութիւն, որի յատակագիծն համառօտաբար արի, տասն և հինգ տարիէ ի վեր իմ ըղձերիս նպատակակէտն է։ Դեռ այժմ իսկ ես դրան շատ մեծ կարևորութիւն եմ տալիս և ես առանց վարանելու կը նուիրուէի դրան, եթէ վստահ լինէի, որ կարող եմ նոյնը գլուխ հանել այնպէս, ինչպէս ես հասկանում եմ. հաստատապէս վճռելով նոյնը այնքան արդիւնաւէտ որքան և փառաւորիչ դարձնելու այն իշխանի համար, որ կը պատուէր ինձ իւր ընտրութեամբ, միանգամայն ապահով լինելով որ ինձ չեն կասեցնիլ կամ խանգարիլ խոչնդոտներով կամ ծախքեր խնայելով։

Ես կարծում եմ, ինչպէս այդ արդէն ասացի, որ ես ամենից լաւ պատրաստուած անձն եմ (թերևս իսկ միակը) այս տեսակ ուղևորութեան համար։ Բացի այն ծանօթութիւնից, որ ունիմ ես հայկական լեզուին և գրականութեանը, դուք գիտէք, իմ թանգագին և ականաւոր եղբայրակից, որ ես նուիրուել եմ և Ասիոյ այլ լեզուների ուսման, որ ինձ օտար չէ պատմական, աշխարհագրական և գրական և այլ ոչ մի խնդիր։ Իմ ունեցած ծանօթութիւններս, վստահանում եմ այդ ասելու, այնքան յայտնի են,

որ կարիք չունիմ այդ մասին երկարելու։ Վերջապէս, Դուք ինքներդ այն անձանց մէկն էք, որ կարող էր ամենից առաւել ճիշտ գնահատել իմ արժէքս, և եթէ Ն. Կայսերական մեծութիւնը կամենայ ձեզ հետ խորհրդակցել այս խնդրի առթիւ, ես չեմ կասկածում, որ ձեզ համար դիւրին կը լինի ձեր համոզումը նրան ներշնչել։

Ն. Մ. Նիկողայոս կայսրը հետեւելով ազնուաբար իւր փառաւոր նախորդների օրինակներին, ընծայել է արդէն մեծ և փայլուն նշաններ իւր լուսաւորեալ և կենդանի սիրոյն, որ վառ է նորա մէջ դէպի գիտութիւնների յառաջադիմութիւնը և օգտակար ու դեղեցիկ ծանօթութիւնները։ Դուք ինքներդ, Ցէր Բարոն, արդէն իսկ մի յայտնի օրինակ էք. դիտնական աշխարհը մշտապէս պարտական կը մնայ այդ մեծ իշխանին այն նշանաւոր դիտողութիւնների համար, որ դուք արել էք նրա կայսրութեան մէջ և որ դուք աւելացրել էր այն դեղեցիկ և բազմաթիւ դիւտերի վրայ, որոնք ձեր անունը առ միշտ երեւելի են դարձրել։

Այս է ահա ինձ բաջալերում ձեզ ղբաղեցնելու մի ուղեորութեան ծրագրով դէպի այն հետաքրքրական կողմերը Մեծ Հայքի, որ որսրան է եղել մարդկային ցեղի և որ մեծարոյ է եթէ կրօնական և եթէ պատմական տեսակէտով։ Ես յոյս ունիմ որ իշխանը սիրով ընդունի մի ծրագիր, որի կարեորութիւնն ինքնին իսկ ճանաչում է և որ, ինչպէս ես կարծում եմ, իւր դիտաւորութեանց համապատասխան է, մանաւանդ երբ դուք նրան կը յայտնէք ձեր կարծիքն իմ մասին և ցոյց կրտաք թէ ինչքան ես կարող եմ օգտակար լինել այսպիսի ձեռնարկութիւն դըլուխ հանելու համար։

Այն շարժառիթները, որոնք կարող էին ինձ արգելք լինել, քանի մի տարի է արդէն գոյութիւն չունին։ Ըսկսած յեղափոխութիւնից (յուլիսեան) որ կործանեց Ֆրանսիայի բարօրութիւնը և վտանգեց Եւրոպայի խաղաղութիւնը, ես չեմ դադարել անարդ և զզուելի հալածանաց նշաւակ լինելուց։ Ես զրկուեցայ բոլոր իմ պաշտօններից իմ բաղաքական կարծիքներիս յարուցած ատելութեան պատճառաւ։ Դուք գիտէք՝ թէ ինչպէս հէնց այն վայր-

կենին, երբ ես անարգարար պաշտօնրնկէց եղայ, Ֆրանսիական ճեմարանի և կոլէգի (l'Institut et le Collège de France) կողմից միաձայն ընտրուեցայ պատմութեան ամբիոնը դրաւելու, որ պ. Գիզոյի հրաժարականից յետոյ թափուր էր մնացել։ Հակառակ օրինաց՝ նախարարը մերժեց այս կանոնաւոր ընտրութիւնն հաստատել։ Ձեր ազգարարութիւնները, ձեր բարեացակամ միջամտութիւնը յաջողութիւն չունեցան։ Ինձնից երկինչնալու պատիւն են առնում ինձ, վախենում են այն ազդեցութիւնից որ կարող եմ ես ունենալ հասարակական դաստիարակութեան մէջ։ Տէր բարոն Դուպոյի և տէր կոմս Պայրոննէի բարեկամութիւնը, որով ինձ յարգում էին, պ. Դուպոյի ինձ յանձնած բոլոր հաւատարմական պաշտօնները, որով ես կցորդուած էի արտաքին գործոց նախարարութեան, այն ազդեցութիւնը որ ինձ են վերագրում մեր գժբախտ անցքերի վրայ, այժմեան նախարարների համար կասկածների առիթ են, նոյնպէս և այն յաճախակի և մասնաւոր յարաբերութիւններն, որ ինձ թոյլ էր տուած ունենալու Ն. Ա. Բ. Բորդոյի դքսի հետ։ Սակայն իրենք ես ամաչելով այս զգուելի հալածանքից, նրանք ձեզ, ինչպէս և իմ այլ շատ բարեկամներիս խոստացել են, որ իմ վնասներիս կատարեալ հատուցում կրտան, մի այնպիսի ձևով կրտան ինձ, որ բոլորական ոչ մի անյարմարութիւն չունենայ։ Ես հաւատացած եմ, որ նրանք վերջ ի վերջոյ կը կատարեն իրենց խոստումը, բայց իմ սարսափս, որ ներշնչում են այդ անձինք և իրենց սկզբունքներն այնչափ է, որ ես կրպերադասէի թողնել Ֆրանսիան և ամենայն ինչ, որ ես իրաւունք ունիմ այստեղ ստանալու, եթէ իմ ձեզ առաջարկած ուղևորութիւնն Ն. Գայսերական Մեծութեան իրական դիտաւորութեանց համապատասխանէր։ Եթէ նա արժանի համարէր իւր հայեացքը ձգելու ինձ վրայ, ես փութով կընդունէի այդ պատիւը։

Իմ դիտաւորութիւնս չէ սակայն բոլորովին լքանել իմ հայրենիքս և բոլորովին վերջնական կերպիւ, գոնէ այժմեանից, մտնել կայսեր ծառայութեան մէջ, թէպէտ եւ ես դրանից չեմ խորշում։ Ես կորոշէի ինչպէս կարծում եմ Նորին Գայսերական և Արքայական Մեծութեան օգ-

տակար լինել քաղաքական ծառայութեան մէջ, արդէն իսկ Փրանսիայի արտաքին գործոց նախարարութեան մէջ պաշտօնից ելած լինելով։ Բայց այս մի խնդիր է, որ ես ուշադրութեան կառնեմ իմ դիտական և գրական ուղևորութիւնն աւարտելուց յետոյ, որ կը տևէ ինչպէս ինձ թւում է չորս տարի։ Իմ վճիռս կախումն կունենայ այն բարոյական վիճակից, որ կունենայ Փրանսիան այն ժամանակ։

Այս ժամանակի ընթացքում, ես կը ցանկայի որ Նորին Կայսերական Մեծութիւնը բարի լինէր ինձ ապահովելու բաւական ռճիկով որով կարող լինէինք ես և իմ ընտանիքս վայելչաբար ապրել, մինչ ես զբաղուած կըլինիմ Պետերբուրգում, Մոսկուայում Աստրախանում, Հայաստանում և այլուր այն յանձնարարութեամբ, որի մասին ձեզ գրեցի։ Ես կըցանկայի բայց յայտնել, որ որոշեալ գրամական ապրիւրներ սահմանուէին ուղևորութեան ծախքերի, նկարիչների, արտագրողների, ուղեկիցների, ձեռագիրներ գնելու և պեղումների համար։ Անհրաժեշտ կը լինի նաև որ Ն. Մ. Կայսրը ինձ նուիրէ բոլորովին գրական կերպիւ իւր հովանաւորութիւնն և անհրաժեշտ չուքը այս ձեռնարկութիւնը դիւրութեամբ և արդիւնաւոր կերպիւ աւարտելու համար. և որ բոլորովին բացայայտ հրամաններ ուղարկուին բոլոր պաշտօնեաներին, թէ քաղաքական և թէ պետական, որ նպաստեն իմ հետախուզութիւններին, իմ առջև բանան բոլոր հասարակական մ'ժբանոցները թէ գրական և թէ եկեղեցական, և վերջապէս ինձ նեցուկ լինին և հաղորդին ամեն ի չ, որ ես կարևոր կը համարեմ հարցնել նրանցից։ Իմ յանձնարարութիւնը սկիզբն առնելով նոյն իսկ կայսրից իրենից, կըցանկայի, որ ինձ իրաւունք տրուէր ուղղակի իրեն, Ն. Կայսերական և Արքայական Մեծութեան միայն ուղղէի իմ հետախուզութեանց արդիւնքները։

Իմ առաքելութիւնս աւարտելով կը ցանկայի այլևս, որ Ն. Մ. Կայսրը, իբրև հատուցումն իմ նրան անել կարեցած ծառայութեանս, և իբրև փոխանակութիւն այն առաւելութեանց որոնցից ես պիտի հրաժարուիմ իմ հայրենիքում, հաճի ապահովելու ինձ տարեկան մի որոշ

ժուռք, որով ես կարող լինիմ կեանքիս մնացորդը ապահովապէս զբաղուիլ կարգի բերելով և հրատարակելով Փարիզում կամ այլուր, որտեղ ես կընտրեմ, իւր հովանաւորութեան տակ և իւր ծախքերով իմ «Ուղեւորութիւններիս նկարագիրը» և այն երկերը, որ կըլինեն դրա հետևանքները, ինչպէս օրինակ, «Հայաստանի եւ շըրջակայ երկրների ընդհանրական պատմութիւն», որի մասին ես դրել եմ ձեզ արդէն, և մի «նկարագրութիւն» շատ մանրամասն Ռուսական եւ Տաճկական Հայաստանի, Կովկասեան երկրների, ինչպէս նաեւ Պարսկաստանի, Սիրիայի եւ Փոքր Ասիոյ այն երկիրների, ուր քնակուում են հայեր։

Եթէ իմ այս առաջարկութիւններս և պայմաններս կարող լինին գտնել Ն. Կայսերական և Ըրքայական Մեծութեան հաճութիւնն և նա արժանի համարէ պատուել ինձ իւր չնորհառատ հովանաւորութեամբ և ծանուցանել ինձ իւր պիտումները, որ ինձ համար հրամաններ կըլինին, իմ ծրագրիս իրագործումն չի ուշանալ, և հէնց 1832 թ. գարնանից ես կարող կը լինիմ դիմել Ս. Պետերբուրգ, այնտեղ վերջին հրահանգներն ստանալու և վերջնականապէս ձեռնարկութեան յատակագիծը կարգաւորելու համար։ Հաստատ համոզուած եմ, որ այս ձեռնարկութիւնը պիտի լինի Ն. Կայսերական Մեծութեան համար այնքան պանծալի, որչափ և արգասաւոր։

Հաճեցէք, իմ թանգագին և ականաւոր եղբայրակից, ընդունել նորանոր հաւաստիքն իմ բարձր յարգանաց և անկեղծ անձնուիրութեան, որով պատիւ ունիմ մնալու

Տէր Բարոն

Ձեր խոնարհագոյն և անձնանուէր ծառայ

Ք. ՍԷՆ-ՄԱՐՏԷՆ

Ընդառաջ ֆրանսիական ճեմարանի.

Փարիզ, 26-ին դեկտ. 1831.

Vieille rue de Temple.
n° 123.